ԿԱՐԾԻՔ

Իրինա Հովհաննեսի Բաբաջանյանի «Հոգեբանի հետազոտական և գործնական դիագնոստիկայում տեսական մոտեցումների և սկզբունքների կիրառման յուրահատկությունները» թեմայով ԺԹ.00.01. «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Խոսելով ժամանակակից հոգեբանության մասին, այսօր պետք է փաստենք, որ այն բազմաճյուղ գիտություն է, որի զարգացումը կանգ չի առել և գտնվում է դինամիկ զարգացման մեջ: Ինչպես և այլ գիտական դիսցիպլիններ, հոգեբանությունը, իր տարատեսակ բաժիններով, շոշափում է ոչ միայն կիրառական հարցերն ու խնդիրները, այլև՝ տեսական և մեթոդաբանական: Վերջիններս հանդիսանում են հոգեբանություն գիտության անքակտելի մասը և շարժիչ ուժը՝ լոկոմոտիվը: Այդուհանդերձ պետք է փաստել, որ հոգեբանության զարգացումը, մասամբ և գլխավորապես կախված է հենց տեսական և մեթոդաբանական նոր մոտեցումների ասպարեզ գալու հետ: Այսօր բազմաթիվ գիտնականների գնահատմամբ, հոգեբանության մեթոդաբանությունը գտնվում է ճգնաժամի մեջ և անհրաժեշտ են այդ ուղղությամբ լուրջ աշխատանքներ, որպեսզի այդ վիճակը հաղթահարվի (Վ.Վ. Կոզլով, Վ.Ա. Մազիլով, Վ.Ֆ. Պետրենկո):

Իրինա Բաբաջանյանի ատենախոսության մեջ քննարկվում և վերլուծության են ենթարկվում հոգեբանության կիրառական ճյուղերից մեկի՝ հոգեթերապիայի, հոգեբանական խորհրդատվության տեսական և մեթոդաբանական հարցերը, ինչը ողջունելի է և գնահատելի: Աշխատանքում տեսական մոտեցումների քննարկումն առավել կարևոր և արդիական է դառնում այն հանգամանքի շնորհիվ, որ դրանց արդյունքում ատենախոսը որոշ առաջարկություններ է անում, ինչի իրագործման արդյունքում, ՀՀ ում հոգեթերապևտիկ և հոգեբանական խորհրդատվություն մատուցող ծառայությունների որակը կտրուկ կաճի և մասնագիտական նոր մակարդակի վրա կբարձրանա, մասնավորապես.

1. Հայաստանյան հոգեբանական կենտրոնների առաջխաղացման նպատակով ներդրվի լիցենզավորման համակարգ.

2. Տեխնիկական նոր սարքերի ներդրում, ինչն առկա է ժամանակակից աշխարհում.

3. Ապահովագրական համակարգի գործածում, ինչը ևս շատ առաջադեմ երկրներում արդյունավետ աշխատում է և այլն:

Ատենախոսության սեղմագիրն արտահայտում է աշխատանքի հիմնական դրույթները և բովանդակությունը:

Այդուհանդերձ պետք է նշենք, որ աշխատանքում առկա են որոշ թերություններ և բացթողումներ, որոնց վերաբերյալ կցանկանանք լսել ատենախոս Իրինա Բաբաջանյանի մեկնաբանությունները.

1. Իբրև տեսական հետազոտության հատուկ նպատակ, ատենախոսը մատնանշում է. *«...վերլուծել ժամանակակից հոգեբանության մեջ առավել ընդունելի ծագումնաբանական սկզբունքների առանցքային դրույթները, որոնք կորոշեն դրանց օգտակարության աստիճանը, ինչը թույլ կտա աշխատանքում կենտրոնանալ գիտելիքների և ողջամիտ համոզմունքների և կարծիքների համեմատության վրա հետազոտության մեթոդաբանություն ընտրելու համար»* (էջ15):

Աշխատանքում չգտանք (առնվազն հստակ նշված չգտանք) այն ծագումնաբանական ընդունելի սկզբունքների (ինչպե՞ս են ընտրվել առավել ընդունելիները) առանցքային դրույթները, որոնցով որոշվել է դրանց օգտակարության աստիճանը և արդյունքում ընտրվել է հետազոտության մեթոդաբանությունը: Ցանկանում ենք ատենախոսը հստակ նշի բերվածը:

2. Ատենախոսության առաջին գլխի ամփոփման արդյունքում ատենախոսը հանգում է հետևյալ եզրակացության. *«...կարևոր է հաշվի առնել և կիրառել ծագումնաբանական սկզբունքները հոգեբանի գիտական հետազոտություններում և գործնական գործունեության մեջ: Այս եզրակացությունը հիմնված է գիտական սկզբունքների և մեթոդաբանության վրա, որն առաջարկվել է փիլիսոփայության, հոգեբանության և այլ հարակից գիտությունների տեսանկյունից»* (էջ 50):

ա) Ծագումնաբանական ինչպիսի սկզբունքների մասին է խոսքը (կցանկանանք ատենախոսը մանրամասնի):

բ) *«Այս եզրակացությունը հիմնված է գիտական սկզբունքների և մեթոդաբանության վրա».* ինչպիսի գիտական սկզբունքների և մեթոդաբանության վրա է հիմնված նշված

եզրակացությունը (շատ ընդհանուր է բերված. փիլիսոփայության, հարակից գիտություններ և այլն), կցանկանանք կոնկրետացնի բերվածը:

Վերևում բերված մոտեցումները նաև արտացոլված են եզրակացություն 1 ում (էջ 182):

3. **Աշխատանքի որոշ հատվածներում օգտագործվում է հաճախորդ եզրույթը, իսկ որոշ հատվածներում այցելու** (այցելու – էջ, 2, 6, 11, 12, 13, 34, 39, 44 և այլ տեղեր, հաճախորդ – էջ, 46, 138, 158, 160, 180), ցանկանում ենք ատենախոսը մեկնաբանի, թե ինչով են պայմանավորված այդ եզրույթների ընտրությունը, ինչու չի սահմանափակվել մեկ եզրույթի ընտրությամբ. արդյոք դրանք բովանդակային տարբերություն ունեն աշխատանքի համար:

4. **Աշխատանքն իր կառուցվածքով, կատարված հետազոտություններով, ենթադրում է գործնական առաջարկություններ**, ինչի վերաբերյալ նաև նշում է ատենախոսը, որ աշխատանքը բաղկացած է գործնական առաջարկությունների բաժնից (էջ 117), սակայն ատենախոսության մեջ նման բաժին առկա չէ և գործնական առաջարկությունները բացակայում են (գործնական առաջարկությունների վերաբերյալ առաջարկությունների հանդիպում ենք 5.3 ենթագլխի ամփոփման ժամանակ, ինչը, սակայն, չի արտացոլում ամբողջ հետազոտության արդյունքները) (էջ, 157): Ցանկանում ենք ատենախոսը նշվածի վերաբերյալ իր մեկնաբանություններն անի և գործնական առաջարկություններ ներկայացնի:

Առանձնահատուկ ցանկանում ենք նշել, աշխատանքում տեղ գտած հայ հոգեբանների աշխատանքներին նվիրված ենթագլխի առկայությունը (ենթագլուխ 2.2 էջ, 88-96)՝ այն ողջունելի է և գնահատելի: Սակայն այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ հոգեկանի, ընկալման գործընթացի ծագումնաբանությանը վերաբերող մեծ և ֆունդամենտալ աշխատանքներ են կատարվել, հայազգի հոգեբան Արշակ Միրաքյանի կողմից, որոնցից հղումներ աշխատանքում չեն արվել (տես՝ Миракян А.И. Афизикальные принципы психического отражения и их моделирование. // Принципы порождающего процесса восприятия. М., 1992, С. 9-46. Миракян А.И. Константность и полифункциональность восприятия. // Автореферат дисс. доктор. псих. наук. М., 1987. Миракян А.И. Контуры трансцендентальной психологии. (Книга 1) М.: изд. «Институт психологии РАН», 1999. – 208 с. Миракян А.И. Начала трансцендентальной психологии восприятия. // Философские исследования. 1995, (2) С. 77-94.): Հուսով ենք, ատենախոսն իր հետագա հետազոտություններում այն հաշվի կառնի:

Եզրակացություն

1. Ատենախոսության թեման արդիական է և հոգեբանության համար կարևոր: Կատարված հետազոտությունները ծառայում են առաջ քաշված վարկածի և խնդիրների ստուգմանը:

2. Մեր կողմից նշված թերությունների և բացթողումների վերաբերյալ, ակնկալում ենք, որ ատենախոսը սպառիչ պատասխաններ կտա:

Այդքանով հանդերձ գտնում ենք, որ Իրինա Հովհաննեսի Բաբաջանյանի «Հոգեբանի հետազոտական և գործնական դիագնոստիկայում տեսական մոտեցումների և սկզբունքների կիրառման յուրահատկությունները» թեմայով ԺԹ.00.01. «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող ՀՀ կառավարության 1997թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ի 7 կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Հայկական Պետական Մանկավարժական

Համալսարանի գիտքարտուղար՝ _____ Մ. Իսպիրյան

Գ.Ս. Եսայանի ստորագրությունը հաստատում եմ

Պաշտոնական ընդդիմախոս՝ _____ Գ.Ս. Եսայան (հ.գ.թ., դոցենտ)

04. հոկտեմբեր 2024թ.